

1988 թ. ապրիլի 29—30-ին տեղի ունեցավ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի XXIII գիտական նստաշրջանի՝ նվիրված անվանի հայագետ-միջնադարագետ, ակադեմիկոս և նաև Ստեփանի Խաչիկյանի ծր-ընդդյան 70-ամյակին:

Քացման խոսքում ՀՍՍՀ ԳԱ քղրակից անդամ, Մատենադարանի տնօրեն Ս. Արևշատյանը ներկայացրեց և նաև Խաչիկյանի կյանքն ու գործը (1918—1982), որ մասնավորապես ասվեց. Լ. Խաչիկյանը ծնվել է 1918 թ. մայիսի 1-ին, Երևանում: 1940 թ. ավարտելով Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետը՝ դարձել է Հակոբ Մանանդյանի աշակերտը: 1945 թ. պաշտպանել է քեկեմաթիկական, իսկ 1961 թ.՝ դոկտորական դիսերտացիա («5-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»), 1963 թ. բնտրվել է Հայաստանի ԳԱ քղրակից անդամ, իսկ 1971-ին՝ իսկական անդամ, 1968 թ. ստացել է գիտության վաստակավոր գործչի կոչում, 1989-ին նրան շնորհվել է ՀՍՍՀ ԳԱ Մաշտոցյան Լ Մրցանակը և այլն: Կատարել է բազմաթիվ կարևոր հետազոտություններ՝ նվիրված միջնադարյան Հայաստանի համալսարանական և այլ գիտակրթական օջախների, քաղաքների արհեստների, գյուղական համայնքի և արևելադավորական շարժումների, հայ ֆեոդալական տների, ռուս և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերի, ներքին և արտաքին տրեսեսական հարաբերությունների, 13—15-րդ դդ. Գողաթական անցումների, բազմաթիվ գիտամշակութային գործիչների մատենագրական գործունեության, բնագիտական մտքի զարգացման և միջնադարյան կյանքի բազմաթիվ այլ կողմերի պատմությանը: Հրատարակել է այդ իսկ պատմությանը վերաբերող անգնահատելի պատմական աղբյուրներ, բնագրեր, վավերաթղթեր ևն:

Ս. Արևշատյանը Խաչիկյանի կենսագրության մի շարք կարևոր տարեթվերի ճշումից բացի, նեղիմաստի պատմա-բանասիրական, աղբյուրագիտական կոնկրետ հետազոտությունների օրինակով բարձր դասեց նրա գիտական վաստակը և գիտության կազմակերպչի դերը՝ Մատենադարանը իբրև ինստիտուտ հիմնադրելու և տնօրինելու տարիներից ի վեր (1959—82):

Խաչիկյանի գիտական ու կազմակերպչական գործունեությանը տեղյակ ունկնդիրները, սակայն, հոնտորի հանդարտ թվարկումների հետևում կարող էին տեսնել այն առօրեական, կենդանի ստեղծագործությամբ բարբախտ, գիտական-ֆալստիցիական իրիզախումներով լեցուն

կյանքը, որ վարել է ներհուն հայագետը ճանաչման դժվար ժամանակաշրջանում:

Նստաշրջանի գիտաճանաչողական հաղորդումների ծրագիրն ընդգրկում էր աղբյուրագիտական տարբեր բնագավառներ և կոչված էր, թեպետ ոչ լրիվ, պատկերացում տալու Խաչիկյանի գիտական հետախույզությունների լայն շրջանակների մասին:

«Նդիշի Արարածոց մեկնությունը» անտիպ աշխատությունը եղել է Լ. Խաչիկյանի քեկեմաթիկական դիսերտացիան (1945 թ.) և նրա արխիվում պահվող մի շարք հրատարակության պատրաստ գործերից մեկն է, որի բնույթըն ու գնահատությանն էր նվիրված Բ. Գ. Դ. Լ. Տեր-Պետրոսյանի զեկնուցումը: Նա նշեց, որ Լ. Խաչիկյանը բազմազան ձեռագրային աղբյուրների հիման վրա հստակաճարար վերականգնել է Նդիշի կորած ստեղծագործությունը, պարզել նրա աղբյուրների ու աղբյուրների հարցերը և հայագիտության մեջ կարևորություն ներկայացնող մի շարք այլ խնդիրներ (օր. հունարեն դպրոցի ձևավորման ժամանակը): Ձեկնուցողը հանգամանորեն ցույց տվեց, որ այս անտիպ աշխատությունն այսօր էլ չի կորցրել իր քարտուրյունն ու այժմեականությունը, ուստի անհրաժեշտ է հրատարակել առանց հապաղելու:

«Լ. Խաչիկյանը հայ միջնադարյան ժողովրդագիտական աղբյուրների հետազոտող» զեկնուցման մեջ պ. Գ. Բ. Ա. Սահակյանը երևան բերեց միջնադարագիտական մի լայն ծրագիր Լ. Խաչիկյանի ուսումնասիրությունների մեջ, որի իրագործման բաղկացուցիչ մասերից մեկն էլ եղել է միջնադարյան ժողովրդական ստեղծագործությունների, հավատալիքների և ազգագրական այլևայլ իրողությունների բնությունը: Ձեկնուցողը մի շարք օրինակներից էլեկելով՝ վերհանեց անվանի հայագետի գիտական հայացքի մի քանի առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս նրան բնորոշելու որպես արդի հայագիտության մեջ բացված մի նոր ուղղության՝ միջնադարագիտության հիմնադրի (մեղիմիստիկական գիտանյութի ժամանակակից եվրոպական ըմբռնումով):

Մյուս զեկնուցումները անուղղակիորեն առնչվելով Խաչիկյանի գիտական հետախույզություններին, հիմնականում ներկայացնում էին նեղիմաստների վաղեմի պրպտումների և դիտարկումների արդյունքները:

Ժամանակին Լ. Խաչիկյանը մատնացույց էր արել Շ. Նազարյանին Հակոբ Նայանի մի անծանոթ բանաստեղծություն, որի վերլուծությանը նվիրված զեկնուցման մեջ («Հայոց կյանքի պատկերը «Առ անձն իր» բանաստեղծության մեջ») Բ. Գ. Դ. Շ. Նազարյանն այն որակեց որպես 18-րդ դարի հայ վերանորոգվող բանաս-

տեղծութան մի կարևոր նմուշ, որի զնահատականր արդիականացրեց՝ համարելով «միջնադարյան նախնական դեպի Բնագրատական տեսլիկը տանող նախնական առաջին քայլ»:

Հաջորդ գեկուցումը, որ կատարեց Բ. Գ. Դ. Փ. Անթապյանը, կոչված էր վերածարծելու միջնադարյան գրեթե ձեռագրագրական Բնույթյան մի շարք կարևոր խնդիրներ: Այդ Բնույթյունը, ըստ գեկուցողի, ունի պատմաճանաչողական, գիտամշակութային մեծ նշանակություն և պահանջում է համակողմանի հետևողական աշխատանք:

Գ. Գ. Ք. Մ. Դարբինյանը «Նիկողայոս Միստիֆոսի նամակի հասցեատեր» գեկուցման մեջ փորձեց X դ. I Բաղրի պատմա-հաղափական իրավիճակի վերլուծությամբ ցույց տալ, որ Կ. Պոլսի պատերազմ Միստիֆոսի (901-907, 912-925) նամակի հասցեատեր «իշխանաց իշխանը» ոչ թե Սմբատ I-ը, այլ Աշոտ Երկրորդն է, որովհետև վերջինս կայսրից օգնություն է խնդրել ընդդեմ գանձի թշնամիների (Ցուսուֆ Սաջիդ, Քիլի և այլք): Հեղինակի կարծիքով վերջին դրույթը կարիք ունի ավելի ամուր կրավանքի:

Հայ քանասիրությանը Պոզոս առաջնալի թրդթերի մեկնությամբ հայտնի XII դ. մատենագիր Գևորգ Կաղի ինքնության խնդրին էր նվիրված պ. Գ. Ք. է. Հարությանյանի գեկուցումը («Նոր տվյալներ Գևորգ Կաղ մատենագրի մասին»): Եղված թրդթեց մեկնության զրույթյան վայրերի հիման վրա գեկուցողը Գևորգ Կաղի գործունեությունն առնչելով Հաղբատ և Սանահին վանական կենտրոնների հետ և մի քանի այլ փաստեր և մի ավելիքներով, համոզիչ կերպով ցույց տվեց, որ Ներսես Շնորհալույց ս. Սարգսի վարքը խնդրող Հաղբատի առաջնորդ Գևորգը, Շնորհալու հետ նամակագրական կապ ունեցող Հաղբատի վարդապետ Գևորգը, հանելուկագիր Գևորգ Մեծը և Շնորհալու հետ հանելուկային մրցավեճ վարող Կաղ Ավետը ներկայացնում են միևնույն անձին՝ Կաղ մականունով Գևորգ մատենագիրին: Մասին և ճուր ցիտարկման արդյունք պետք է համարել այն, որ Հարությունյանը կարողացել է Շնորհալու հանելուկների գործող անձ Կաղ Ավետի տակ տեսնել հեղինակին մտերիմ կենդանի մարդ, իսկ նրանց միջև՝ շեղմ համոզով օժված ընկերական հարաբերություն:

Հաջորդ, «Մատենագրական վկայություններ հայ միջնադարյան կերպարվեստի մասին» գեկուցումը կարդաց Բ. Գ. Ք. Զ. Քյոսեյանը: Պարզվեց, որ պարականոն, մեկնողական կամ ճանաչողական երկերի որոշ հատվածների օգնությամբ հասկանալի են դառնում մանրանկարչական ինչ-ինչ ճարտարապետներ, որովհետև վերջիններս դառնում են եղված մատենագրական հատվածների պատկերագրություններ: Փաստորեն գեկուցողը ընդունված մանրանկարչական քանաների (Մեմեդ, Մկրտություն և այլն) մեջ նկատվող «շեղումներ» գրաչափի սկզբնականները որոնելու գործում ուղարկություն է հրավիրում

սուրբ գրական մեկնությունների տիպի «օժանդակ» գրականության վրա, որի տվյալները, սակայն, ոչ թե վկայություններ են կերպարվեստի մասին, ինչպես վերնագրում է, այլ աղբյուր են մանրանկարչական սյուժետային ինչ-ինչ տարրերի համար (իհարկե, այդ աղբյուրն ամեն կենդանի դեպքում համոզիչ կերպով նշտելու և հաստատելու պայմանով):

«Բնագրական մտքի զարգացումը Հայաստանում 16—17-րդ դարերում» գեկուցման մեջ թժլկ. Գ. Ք. Դ. Կարապետյանը մանրամասնորեն ներկայացրեց թժլկական մտքի անցած ուղին, բարձր զնահատեց նրա նվաճումները (օր. Սեբաստացիների թժլկական «ղպրոց» ձևավորումը), բայց բնագիտության մյուս բնագավառները նշվեցին միայն թվարկման կարգով, դարձյալ ի հակառակ վերնագրի, ինչպես տեսանք ճարտող գեկուցման դեպքում: Հարկ է նշել, որ անցյալի բնագիտական մտքի համակարգման ասպարեզում ևս նախկինի ստեղծած փորձը մի քանի աշխատանքներում (տե՛ս հատկապես «Հայ բնագիտական միտքը 14—18-րդ դարերում», Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 2, էջ 23—44) դեռևս մնում է շարացված և պահանջում է կոնկրետ շահեր:

Մեղրոզ օրվա նիստը սկսվեց Բ. Գ. Գ. Ա. Մարտիրոսյանի «Պարոն Սարգսի տապանաբար» գեկուցումով, որտեղ հեղինակը վեր է հանում պարոն Սարգսի անձը, որի տապանաբար գտնվել է Ամաղու-Նուրավանքի բազում: Ցույց է տրվում, որ պարոն Սարգսը Աթաբեկ Իվան Չախրյանի գնակից Ախթամար Արփայեցու թոռն է: Արդուն և Ահմադ Հուլավյանների միջև մղվող գահակալում պարոն Սարգսը Տարսային Օրբելյանի հետ հանդես էր գալիս Արդուկ կողմից, որը հայտնի էր Բրիտանյանների հանդեպ իր բարեհաճ վերաբերմունքով: Զեկուցման միջոցով առաջին անգամ որպես պատմական-մշակութային վավերանյութ շրջանառության մեջ են մտնում գերեզմանային խաչաքարեր (Սարգսի և Փայլիկի):

Այնուհետև ձեռագրային աշխարհի իր խուզարկումներից ունկնդիրներին մաս հանեց Բ. Գ. Դ. Գ. Արզարյանը՝ «Գուրգ անվան ստուգաբանման փորձ» գեկուցմամբ: Վարդան Արևելյան «Աշխարհացույցում» և այլուրեք հանդիպող «Գուրգ» տեղանունը, ասում է գեկուցողը, ոչ մի կապ չունի հայերեն «գուրգ» («զանգրահեր») բառի հետ, այն փոխ է պահված ֆրանկների գործածած «Cruz» («խաչ») բառից, որ հայունիքոսների լեզվում փոխարինել է (թարգմանաբար) «Սուրբ խաչ» կամ «ս. Խաչ» հասկացություններին:

Պետք է ավելացնել, որ ժողովրդական երգերի ու միջնադարյան հավաքածուի հեղինակ իտալացու անունը դարձյալ չի նշանակում «Գանգուր խաչ», այլ կազմված է նույն իմաստի տարալեզու (հայերեն և լատիներեն) կրկնությամբ (հմմտ. Գրիգոր Լուսավորիչ = Լուսավորիչ լուսավորիչ): Ամենայն հավանականությամբ

Խաչգուզ մականունը առաջ է եկել հավաքածուի հեղինակի Խաչիկ անունից: Փաստորեն Գ. Արզարյանի զեկուցման դրույթը «գոուզի» մասին այնքան համոզիչ ու ակնհայտ է, որ վերջինս ոչ միայն ստուգարանման փորձի, այլև ստուգարանման իսկ կարիք չունի:

«Մի նկատում Ազաթանգեղոսի «Պատմություն» առաջարանում» զեկուցման հեղինակ Բ. Գ. Ք. Պ. Խաչատրյանը որպես վարկած առաջացնում է այն միտքը, թե առաջարանում ծովային ճանապարհորդության և վանառականության հետ համեմատվող պատմիչի աշխատանքի՝ խոսքի առևտրի փոխաբերական պատկերում անուղղակի արտացոլվել է Տիր աստծո մասին պատկերացումը: Վերջում, չբավարարվելով Տիր աստծո «գոուզական» և «վճռականական» ֆունկցիաների կապի կոպաններով, զեկուցողը արդարացի կասկած հայտնեց, որ առաջարանի խնդրո առարկա համեմատությունը կարող է լինել «ընդհանուր տեղի» միջնադարյան ողջ Բրիտանիական գրականության մեջ: Եվ իրոք, այդ «ընդհանուր տեղին» ծագումնաբանորեն առավել կապված է միջերկրածովյան և հունական ծովային առևտրի հետ, որի հովանավոր Հերմեսը տեղիում էր նաև գործնական դպրությունը: Հայտնի է նաև, որ «Ioci communi» կոչված ռեական միջոցների հիմնական մասի մատակարարը եղել է հունական ուլ անտիկ և վաղ Բրիտանիական գրականությունը:

Տարբեր կարգի խազավորումների հետազոտության մի նոր փուլ ներկայացրեց երաժշտության պատմաբան, արվեստագիտության դոկտոր Ն. Քասմիրյանը՝ «Միջին բարդության երկրորդ կարգի խազավորումների վերծանությունը» զեկուցման մեջ: Ըստ հեղինակի՝ վերնագրում նշված խազավորումները իրացվում են երգչային ավելի քան 20 նշաններով, որոնցից բլենարկվող տիպին հատուկ են չորս խազագրեր՝ «լար», «բազմնդանակ», «բարձրահարեր» և օ-

ժանդակ նշաններից մեկ կամ երկու զույգ կետեր:

Նստաշրջանի վերջին զեկուցումը կարգաց արվեստագետ. թեկ. է. Կորիմազյանը («Ջուլայի խաչարի վրա նկատված մի առեղծվածային պատկերի վերծանման փորձ»), որտեղ խնդիր էր դրված բացատրել XVI—XVII դդ. խաչարների նախատին հանդիպող մի պատկեր, որու քննվող մարդու զուխ ունեցող զույգ առյուծների պոչերը ավարտվում են հակառակ կողմեր հայող վիշապների բացված երախներով: Ջեկուցողի կարծիքով նշված պատկերը համապատասխանում է միեռական մեխանիզմում դրված արձաններին: Միաժամանակ, սակայն, զեկուցման մեջ միեռապաշտական հետ դիտված այդ պատկերը հիշեցնում է Նովհանուն Հայտնության այն գազանին, որի երեսյն ազդարարում էր Քրիստոսի երկրորդ գալուստը: Թվում է, որ վերջին նկատումը պատկերի ավելի ճիշտ բացատրման հետևանք է խոստանում:

Հարկ է նշել, որ գիտական նստաշրջան ավելի հարուստ կարող էր լինել, եթե բոլոր հետախոնարարները լաված զեկուցումներ անցնեին ակտիվ քննարկումների և կարծիքների փոխանակման մթնոլորտում, ինչպես վարվում էր ինքը՝ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը: Բացի այդ, նստաշրջանի հատուկ ուղղվածությունը ենթադրում էր ծրագրի մեջ ընդգրկել ավելի շատ զեկուցումներ՝ նվիրված հայագետի գիտական ժառանգության լուսարանմանը, մանավանդ սպասելի էր և ճանաչողական տեսակետից էլ շահեկան կլինեի նրա անտիպ ժառանգության մասին մի հաղորդում, որ ցավով շեղավ:

Վերջում Մատենադարանի տեղի Ս. Արևշատյանը նստաշրջան ամփոփեց ու զննատեց որպես հոգևոր տուրք, հերթական հարկ պայծառ ֆազիաբացու ու գիտնականի՝ ակադ. Լևոն Խաչիկյանի հիշատակին:

Ա. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՈՒՂՂՈՒՄ

Հանդեսի 1988 թ. № 1-ի էջ 60-ում, ցածից 6-րդ տողի «աշակերտի վարժ-վելը» բառակապակցություն» հատվածը կարդալ. «աշակերտի վարժեցվելը» բառակապակցություն»: